

## Մասնագիտության նկարագիրը

<b>Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը</b>	Կահույքագործ
<b>I. Դերը</b>	Կահույքագործը, կազմակերպաիրավական տարբեր տնտեսաձևի փայտամշակման կազմակերպություններում փայտանյութից և այդօրինակ նյութերից (լամինացված փայտատաշեղային և փայտաթելային սալեր) պատրաստում է կահույք, ինչպես նաև իրականացնում է կահույքի նորոգման աշխատանքներ:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Փայտանյութ և այդօրինակ նյութեր</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. ծառատեսակների պատրաստման փայտանյութերի և այդօրինակ նյութերի դասակարգում,</li> <li>2. ծառի բնի հիմնական կտրվածքներում կառուցվածքային տարրերի որոշում,</li> <li>3. փայտանյութերի և այդօրինակ նյութերի հատկությունների - բնութագրում, այդ հատկություններով ծառատեսակների որոշում,</li> <li>4. տեքստուրայով ծառատեսակների տարբերակում,</li> <li>5. արատներով փայտանյութի պիտանելիության որոշում:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. սաղարթավոր և փշատերև ծառատեսակները ներկայացված են,</li> <li>2. ըստ ծառի բնի հիմնական կտրվածքների կառուցվածքային տարրեր որոշված են և բնութագրված,</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>3. կահույքագործությունում կիրառվող փայտանյութերը և այդօրինակ նյութերը ներկայացված են, հատկությունները բնութագրված,</li> <li>4. տեքստուրաներով ու հատկություններով</li> <li>5. փայտանյութերը և այդօրինակ նյութերը</li> <li>6. տարբերակված են:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 2. Տիպային շինվածքների և մանրամասերի աշխատանքային գծագրեր և էսքիզներ</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. երկրաչափական կառուցումների կատարում.</li> <li>2. տիպային մանրամասերի պրոյեկցիաների կառուցում և արտահանման տրիաների պատկերում,</li> <li>3. տիպային շինվածքների և մանրամասերի աշխատանքային գծագրերի և էսքիզների պատկերում,</li> <li>4. տիպային շինվածքների և մանրամասերի գծագրերի ընթերցում:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. երկրաչափական կառուցումները՝ երկրաչափական պատկերներ, լծորդումներ, ուղղահայաց և զուգահեռ գծեր, շրջանագիծ, էլիպս և այլն, կատարված են,</li> <li>2. տիպային մանրամասերի պրոյեկցիաները և արտահանման տրիաները կառուցված են, կտրվածքները տրված,</li> <li>3. տիպային գծագրերում կիրառվող պայմանական նշանները ներկայացված են,</li> <li>4. տիպային էսքիզները և աշխատանքային գծագրերը պատկերված են,</li> </ol>

	5. տիպային գծագրերը ընթերցված են:
<b>Խնդիրների բնագավառ 3. Թույլտվածքներ եվ նստեցվածքներ, չափիչ-չափանշան գործիքներ, չափումներ</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. չափիչ-չափանշան գործիքների կիրառում,</li> <li>2. հարթական և տարածական չափումների և ստուգումների կատարում,</li> <li>3. թույլտվածքների և նստեցվածքների համակարգերի պարզաբանում և դրանց չափերի որոշում,</li> <li>4. ճշգրտության և մաքրության դասերի որոշում,</li> <li>5. թույլտվածքների, նստեցվածքների և անհարթությունների չափումների կատարում,</li> <li>6. չափումները և ստուգումները իրականացվում են՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. չափիչ-չափանշան գործիքների կառուցվածքի և կիրառման սկզբունքները պարզաբանված են,</li> <li>2. հարթական և տարածական չափումները և ստուգումները կատարված են՝ համաձայն աշխատանքային գծագրի և ձևանմուշի,</li> <li>3. դետալների չափերի թույլտվածքների և հանգուցամասերի նստեցվածքների համակարգը, ճշգրտության և մաքրության դասերը պարզաբանված են,</li> <li>4. ճշգրտության և մաքրության դասերի պայմանական նշանները ընթերցված են, թույլտվածքները, նստեցվածքները և թողնվածքները որոշված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> </ol>

	<p>5. թույլտվածքների, նստեցվածքների և անհարթությունների չափումները կատարված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</p> <p>6. աշխատանքները իրականացված են՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 4. Ճեռքի գործիքներով փայտամշակման աշխատանքներ</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. աշխատատեղի կազմակերպում,</li> <li>2. ձեռքի ընդհանուր նշանակության գործիքների կիրառում,</li> <li>3. ձեռքի փայտամշակման հիմնական գործիքների կիրառում,</li> <li>4. ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքների կիրառում,</li> <li>5. սևեռակ հարմարանքների կիրառում,</li> <li>6. աշխատանքների իրականացում՝ պահպանելով</li> <li>7. անվտանգության կանոնները,</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. աշխատատեղը կահավորված է՝ համաձայն անվտանգության պահանջների,</li> <li>2. ձեռքի ընդհանուր նշանակության գործիքներով տիպային աշխատանքները կատարված են,</li> <li>3. ձեռքի տարբեր տեսակի սղոցներով, ձեռքի էլեկտրամեխանիկական սկավառակասղոցով և նրբասղոցով փայտանյութերը սղոցված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>4. ձեռքի տարբեր տեսակի ռանդաներով և ձեռքի</li> </ol>

	<p>էլեկտրամեխանիկական ունդայով      փայտանյութերի մակերևույթները ունդված են՝      համաձայն աշխատանքային գծագրի պահանջների,</p> <p>5. ձեռքի տարբեր տեսակի դուրերով և ձեռքի      էլեկտրամեխանիկական ֆրեզերով փայտանյութերը      փորակված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</p> <p>6. ձեռքի էլեկտրամեխանիկական հղկիչով      փայտանյութերի մակերևույթները հղկված են՝      համաձայն աշխատանքային գծագրի պահանջների,</p> <p>7. ձեռքի էլեկտրամեխանիկական պտուտակիչով      փայտանյութերը հավաքակցված են՝ համաձայն      հավաքական գծագրի,</p> <p>8. ձեռքի էլեկտրամեխանիկական գայլիկոնիչով      անցքերի շաղափում՝ համաձայն աշխատանքային      գծագրի,</p> <p>9. աշխատանքներում կիրառված են սևեռակ      հարմարանքներ և աշխատանքները իրականացված      են՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
--	--

**Խնդիրների բնագավառ 5. Հաստոցներով փայտամշակման աշխատանքներ**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. սկավառակաստղոցային և ժապավենաստղոցային հաստոցներով փայտանյութերի ստղում.</li> <li>2. ֆրեզերային հաստոցով փայտանյութերի փորակում,</li> <li>3. ֆուգանային հաստոցով փայտանյութերի ունդում,</li> </ol>
---------------------------------------	--

	<ol style="list-style-type: none"> <li>4. ռեյսմուսային հաստոցով փայտանյութերի ռանդում,</li> <li>5. խառատային հաստոցով փայտանյութերի շրջատաշում,</li> <li>6. գայլիկոնիչ հաստոցով անցքերի շաղափում,</li> <li>7. չափաձևման հաստոցով փայտասալերի կտրում,</li> <li>8. հաստոցներով աշխատանքերը իրականացվում է՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. համաձայն աշխատանքային գծագրի՝ նախապատրաստվածքները, կտրող գործիքները ընտրված են և տեղակայված,</li> <li>2. հաստոցները կարգաբերված են, աշխատանքային ռեժիմները ընտրված,</li> <li>3. սկավառակասողոցային և ժապավենասողոցային հաստոցներով փայտանյութերը սղոցված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>4. ֆրեզերային հաստոցով փայտանյութերը փորակված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>5. ֆուգանային հաստոցով փայտանյութերը ռանդված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>6. ռեյսմուսային հաստոցներով փայտանյութերը ռանդված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>7. խառատային հաստոցով փայտանյութերը շրջատաշված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> </ol>

	<p>8. գայլիկոնիչ հաստոցով անցքերը շաղափված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</p> <p>9. չափաձևման հաստոցով փայտասալերը կտրրված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</p> <p>10. հաստոցներով աշխատանքերը իրականացված է՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
--	---

**Խնդիրների բնագավառ 6. Կահույքագործությունում օգտագործվող հյուսնային միացություններ**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. հյուսնային միացությունների դասակարգում և բնութագրում,</li> <li>2. հյուսնային միացությունների չափերի որոշում,</li> <li>3. հյուսնային միացությունների էսքիզների պատկերում և չափադրում,</li> <li>4. փայտանյութի ընտրում, նախապատրաստվածքի պատրաստում և չափանշում,</li> <li>5. սոսինձների ընտրում, սոսնձման գործույթի իրականացում,</li> <li>6. հյուսնային միացությունների տարրերի պատրաստում,</li> <li>7. կողային միացության հավաքակցում՝ համաձայն էսքիզի,</li> <li>8. ճակատային միացության հավաքակցում՝ համաձայն էսքիզի,</li> <li>9. անկյունային միացության հավաքակցում՝ համաձայն էսքիզի,</li> <li>10. t-աձև միացության հավաքակցում՝ համաձայն էսքիզի,</li> </ol>
---------------------------------------	---

	<ol style="list-style-type: none"> <li>11. հատվող միացության հավաքակցում՝ համաձայն էսքիզի,</li> <li>12. աշխատանքների իրականացում՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. հյուսնային միացության բուժակների, փորակների և բլթանցքերի չափերը բանաձևային որոշված են,</li> <li>2. փայտանյութերը ընտրված են, նախապատրաստվածները մշակված՝ հաշվի առնելով սոսնձման թողնվածքը,</li> <li>3. հյուսնային միացությունները համաձայն էսքիզների պատրաստված են,</li> <li>4. աշխատանքները իրականացված են՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p align="center"><b>Խնդիրների բնագավառ 7. Փայտե կահույքի կառուցվածքային տարրերի պատրաստում և հավաքակցում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. ըստ հավաքական գծագրի կահույքի ձևի և կառուցվածքի որոշում,</li> <li>2. կահույքի գծային, մակերեսային և ծավալային տարրերի էսքիզավորում, չափերի տեղադրում,</li> <li>3. փայտանյութի ընտրում, նախապատրաստվածքների պատրաստում,</li> <li>4. փայտե կահույքի հավաքակցման համար անհրաժեշտ պարագաների, սոսինձների ընտրում,</li> <li>5. փայտե կահույքի հանգուցամասերի գծային տարրերի պատրաստում,</li> <li>6. փայտե կահույքի հանգուցամասերի մակերեսային տարրերի պատրաստում,</li> </ol>



	<ol style="list-style-type: none"> <li>7. փայտե կահույքի հանգուցամասերի ծավալային տարրերի պատրաստում,</li> <li>8. փայտե կահույքի հանգուցամասերի տարրերի երեսապատման համար նյութերի, պարագաների, գործիքների ընտրում,</li> <li>9. փայտե կահույքի հանգուցամասերի տարրերի երեսապատման համար նախնական մշակում,</li> <li>10. փայտե կահույքի հանգուցամասերի տարրերի երեսամշակում,</li> <li>11. փայտե կահույքի հանգույցների հավաքակցում,</li> <li>12. փայտե կահույքի հավաքակցում,</li> <li>13. աշխատանքները իրականացնում է՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. փայտե կահույքի ձևը և կառուցվածքը որոշված է՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>2. փայտանյութը ընտրված է, նախապատրաստվածքները մշակված, հավաքակցման պարագաները, սոսինձները ընտրված,</li> <li>3. երեսապատման նյութերը, պարագաները, գործիքները ընտրված են,</li> <li>4. փայտե կահույքի գծային, մակերեսային և ծավալային տարրերի էսքիզները պատրաստ են և չափադրված,</li> <li>5. փայտե կահույքի գծային, մակերեսային և ծավալային տարրերը երեսապատված են,</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>6. փայտե կահույքի հանգույցները հավաքակցված են՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>7. փայտե կահույքը հավաքակցված է՝ համաձայն աշխատանքային գծագրի,</li> <li>8. աշխատանքները իրականացված են՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p><b>Խնդիրների բնագավառ 8. Փայտասալե (լամինացված փայտատաշեղային կամ փայտաթելային) կահույքի կառուցվածքային տարրերի պատրաստում և հավաքակցում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. հավաքական գծագրից փայտասալե կահույքի տարրերի որոշում, էսքիզավորում և չափանշում,</li> <li>2. ըստ աշխատանքային գծագրի նախապատրաստվածքի ընտրում և տեղակայում չափաձևման հաստոցի վրա,</li> <li>3. չափաձևման հաստոցի կարգաբերում,</li> <li>4. չափաձևման հաստոցով կահույքի տարրերի կտրում,</li> <li>5. լայնական սկավառակաստղոցման հաստոցով կահույքի անհրաժեշտ տարրերի անկյունների կտրում,</li> <li>6. հավաքակցման պարագաների որոշում,</li> <li>7. փայտասալե կահույքի հանգուցամասերի հավաքակցում,</li> <li>8. փայտասալե կահույքի հավաքակցում,</li> <li>9. աշխատանքները իրականացվում է՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. ըստ պայմանի փայտասալը ընտրված է,</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>2. փայտասալե կահույքի տարրերը չափաձևման և լայնական սկավառակասողոցման հաստոցներով պատրաստված են,</li> <li>3. փայտասալե կահույքի հանգուցամասերը հավաքակցված են,</li> <li>4. հավաքական գծագրի պահանջներին համապատասխան փայտասալե կահույքը պատրաստված է,</li> <li>5. աշխատանքները իրականացված է՝ պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	Պատասխանատու է աշխատատեղի սանիտարահիգիենիկ վիճակի, անվտանգության պահանջների իրականացման, կահույքի պատրաստման և նորոգման որակի համար:
<b>IV. Լեզուները</b>	հայերեն՝ գերազանց, մեկ օտար լեզու՝ բավարար:
<b>V. Համակարգիչը</b>	MS office –բավարար, Internet Explorer բավարար: Գծագրության և ձևման-չափման ծրագրեր-ցանկալի է:
<b>VI. Գիտելիքները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. փայտանյութագիտության հիմունքների իմացություն,</li> <li>2. գծագրության հիմունքների իմացություն,</li> <li>3. ձեռքի գործիքներով փայտամշակման գործառույթների իմացություն,</li> <li>4. ձեռքի գործիքների և հաստոցների կառուցվածքի և աշխատանքային սկզբունքների իմացություն,</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>5. հաղորդակցման և աշխատանքային հարաբերությունների իմացություն,</li> <li>6. կահույքի ձևերի և կառուցվածքի իմացություն,</li> <li>7. կահույքի մանրամասերի պատրաստման, հանգույցների և կահույքի հավաքակցման գործառույթների իմացություն,</li> <li>8. կահույքի մանրամասերի երեսապատման գործառույթների իմացություն,</li> <li>9. բնության պահպանման և շրջակա միջավայրը չաղտոտելու իմացություն:</li> </ol>
<p><b>VII. Կարողությունները և հմտությունները</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. փայտանյութի և այդօրինակ նյութերի ընտրում,</li> <li>2. հարթական և տարածական չափումների կատարում,</li> <li>3. թույլտվածքների, նստեցվածքների և թողնվածքների իմացություն,</li> <li>4. գործիքների տարբերակում և կիրառում.</li> <li>5. փայտամշակման հաստոցների ռեժիմների ընտրում, կարգաբերում և կիրառում,</li> <li>6. փայտամշակման հիմնական գործառույթների կատարում,</li> <li>7. հյուսնային միացությունների պատրաստում.</li> <li>8. սոսնձման գործառույթների կատարում,</li> <li>9. կահույքի հավաքակցման գործառույթների կատարում,</li> <li>10. անվտանգության պահանջների կատարում,</li> </ol>

	<p>11. աշխատանքային նորմատիվ պահանջների պարզաբանման կարողություն,</p> <p>12. սեփական մտահղացումները առաջարկելու կարողություն,</p> <p>13. հանձնարարականները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն,</p> <p>14. անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողություն,</p> <p>15. մարդկանց հետ շփվելու կարողություն:</p>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Պատասխանատվության զգացում, ազնվություն, աշխատասիրություն, շփվելու և բանակցելու ունակություն, հարգալից վերաբերմունք դրսևորելու և լսելու ունակություն:</p>